



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԾՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐք
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅՑԱՆԻՆ**

**Վ Ա Զ Գ Ւ Ե Ե Խ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Մ Ի Ք Ր Ի Ս Ո Ս Ի ,
Ո Ղ Ա Ր Մ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ի Ա Մ Տ Ո Ւ Ն Ո Յ Ե Ւ Կ Ա Մ Տ Օ Ք Ե Ա Զ Գ Ի Ս
Ե Պ Ի Ս Ն Ո Պ Ո Ս Ա Վ Պ Ե Տ Ե Ս Ե Ւ Կ Ա Ր Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ Յ ,
Խ Ա Յ Ր Ա Գ Ո Յ Յ Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Հ Ա Մ Ա Զ Գ Ա Կ Ա Ն Ն Ա Ր Ա Մ Ե Ն Ն Ա Ր
Ա Ր Ո Ո Ո Յ Ա Յ Ր Ա Ր Տ Ե Ա Ն Ա Ր Ա Ք Ե Լ Ա Կ Ա Ն Մ Ա Յ Ե Ր
Ե Ն Ե Վ Ե Տ Ի Ո Յ Մ Ր Բ Ո Յ Կ Ո Ւ Դ Ա Կ Ի Ե Զ Մ Ի Ա Մ Ե Ն Ի Ւ Մ Ի Ւ**

Քրիստոսաւանության օրուօք ՈՂԶՈՅՆ ԵԻ ՕՐԵՆՈՒԹԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՏԻՐԱՆԱՅ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍԻ ՆԵՐՍՈՅՑԵԱՆ, ՆՈՐԾՆՏԻՐ
ՊԱՏՐԻԱՐքԻՆ ՄՐԲՈՅՆ ՍԱՊԱՄՄԱՅ ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՈՈՅՆ,
ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅՆ

«ՈՉ ԵԹ Է ԱՆՁԱՄՔ ՈՔ ԱՌՆՈՒ ՊԱՏԻՎ, ԱՅ ԿՈՉԵՑԵԱԼՆ ՅԱՍՏՈՒՆՈՅ ՈՐ-
Պ Ի Ս ԵԻ ԱՀԱՐՈՎՆ» (Եբր., ե 4):

Մրտի գոհունակուրյամբ տեղեկացանք, որ 20 մարտ 1957-ին Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին մեջ գումարված միաբանական ընդհանուր ժողովը Զերդ Մրտազնությունը բնուրած է Պատրիարք Երուսաղեմի Հայոց Առաքեական Ս. Արքունիք:

Զեր ընտրուրյամբ կվերնա սուզի և Տողր Ս. Արքունիք Վրայեն, որ բա-
խուր մեացած էր 1949 թվականին ի վեր, հոգելույս Տ. Կյուրեղ թ Պատրիարքի մահեն հետո; «ՈՅՑՍ ՇԱԳԵԱՅ ԱՐԴԱՐՈՅ. ՈՒՂՂՈՅ ՄՐՏԻՒՔ Եղեի ՈՒՐԱԿԱՅԻ-
ԹԻՒՆ» (Սաղմ., Դ. 9, 11):

Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Արքուն մեր Ս. Եկեղեցվո Եպիրապե-
տական պատմական Արքուներեն մեկն է, և նայ ճավատացյալ ժողովրդի պար-
ծանքն ու փառքը:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը եղած է Հայ Եկեղեցվո դրոշակիրը Ա. Տեղյաց մեջ, և մեր Եկեղեցական ազգային իրավունքներու աննկուն պաշտպանը համարքիստոնեական Ա. Քաղաքին մեջ:

Ս. էջմիածնեն հետո Ա. Երուսաղեմը կհանդիսանա մեր համազգային սրբավայրեն մեկը, որուն անոնք նվիրական է և բանկ համայն հայության համար:

Ա. Երկիր մեջ է, որ ծնավ Աստվածութին, ապրեցավ ու երաշագործեց, բարողեց և խաչվեցավ, ապա մահվամբ մաքր կոխելով հառություն առավ, ոգեկան նոր աշխարհի մը դռները բանալով հոգիներու փրկության նահապարհը փնտող մարդկության առաջ: Երուսաղեմի յուրաքանչյուր բար մաշած է տեօրինական Ա. Տեղերը այցելող բարեպաշտ ովաստավորներու համբույրով, և ուր ամեն բան կմիջեցնե Քրիստոսի փրկագործության սուրբ խորհությունը:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը, Միածնի իշխան լուսաշող տեսիլով պայծառացած Հայաստանյաց լուս հավատքի վեմն է Ա. Տեղյաց մեջ, և Սրբց Հակոբյանց աղորող ու գործող միաբանությունը՝ հայ ժողովրդի բրիտոնեական խոճի, սիր և նվիրաւի զինվորյալ մարմինը՝ ի փառ Աստուծուն:

Բայց իր նոգեուր պարտականություններուն հետ միասին, Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը յուրովսանն ծառայած է հայ ժողովրդի մշակույթին ու դպրության և Ազգին կարիքներուն:

Մեզ բաշ հայտնի է այսօր, Սփյուռքի պայմաններուն մեջ, Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Արողի միաբանություն կատարած աշխատանքը հօգուտ Հայ Եկեղեցվո և Ազգի:

Այսօր այ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը իր միաբանությամբ, Ժառանգավորաց վարժարանով և Ընծայարանով, Մատենադարանով և իր մամուլ, կոչված է մեծ դեր կատարելու մեր Եկեղեցական ազգային վերազարդենին մեջ, Մայր Արող Ա. էջմիածնի և մեր մյուս նվիրապետական Արողներուն հետ միասին, միախորհություն ու միակամ:

Սիր ողջույնով և հայրապետական սույն շնորհավորական կոնդակով կիսատատենք Ձեր պատրիարքական ընտրությունը, այն խորունկ համոզումով, որ Դուք Ձեզ հատկանշող հավատքով, ճախանձահությությամբ և նվիրումով, իրեւ հավատարիմ ու հարազատ զավակը Հայաստանյաց Եկեղեցվո և Մայր Արող Ա. էջմիածնի, պիտի կարողանաք այդ մեծ ու համազգային հաստատության մեջ, որ Սրբց Հակոբյանց դարավար վաճեն է, սփյուռք դնել հոգեուր ու մշակութային զարդնեի մը: «ԵՐՍՆԵԱԼ է ԱՅՐ, ՈՐ ՀԱՄԲԵՐԻՑ է ՓՈՐ-ԶԱՆԱՑ, ԶԻ ԵԹ է ԸՆՏԻՒ ԵԽՍ ԳՏԱՆԻՑԻ, ԱՌՑ է ԶՊՍԱԿՆ ԿԵՆԱՑ՝ ԶՈՐ ԽՈՍՏԱՑԻ ՍԻՒԵԼԱՑ ԻՒՐՈՑ» (Հակ., Ա. 12): Պիտի ծաղկեցնեն Ա. Արողը, որպես ավանդապահը Հայ Եկեղեցվո սրբություններուն և ոգեկան արժեքներուն, և որպես ներշնչարանը հայ բարեպաշտության: Պիտի անեցնեն ու պատրաստեն մանավանդ գիտակից, նվիրված, հավատավոր հոգեռականներու նոր սերունդ մը, ճախելու ոգիով ծառայելու Ա. Տեղյաց ու Հայաստանյաց Եկեղեցվույն, մողենի տարու համար Երուսաղեմի Ա. Արողնեւ ներս տիսուր անցուարձերը, և Մայր Արող Ա. էջմիածնի հետ սերտ համագործակցությամբ, ազգային Եկեղեցական միասնության անհակտելի ուսուով, Ա. Արողի միաբանությունը Ձեր շուրջը հավաքած, պիտի աշխատիք նպաստել մեր օերուն՝ Հայ Եկեղեցվո գրացման և հայ ժողովրդի հոգեուր կյանքի շինության:

Կաղորենք, որ Տեղը անեցնե Ձեր ուժն ու կրովը, և իր լուսով առաջնորդե զմեզ, և օրինե Ձեր ձեռաց սուրբ գործերը:

Կմաղթենք ճակ ի սրտե, որ Մրցոց Հակոբյանց Ձեր միաբանակից և գործակից եղբայրները նույն լույսով և նույն օգիով առաջնորդվին, Ս. Արոնիդ Եվիրական առաքելուրյան ոգիով զինվորված:

«ԱՍՏՈՒԱԾ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՅԷ ՁԵԶ ՃՆՈՅՆ ԽՈՐՀԵԼ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՀԱՏ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ» (Հոռմ., ԺԵ 5), զի «ԹէՊէՏ ԵՒ ԲՍԺԻՆՔ ՇՆՈՐՀԱՑ ԵՆ, ԱՅԻ ՀՈԳԻ ՆՈՅՆ Է» (Ա. Կորեր., ԺԲ 4):

Պատվեր տամ ձեզ բրուրիդ՝ «ԱՄԵՆԱՅՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀԵԶՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԵՐԿԱՅՆՄՏՈՒԹԵԱՄԲ՝ ԱՆՍԱԼ ՄԻՄԵԱՆՑ ՍԻՐՈՎ, ՓՈՒԹԱԼ ՊԱՀԵԼ ԶՄԻԱՐԱԱՆՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅՆ ՅՈԴԻԻ ԽԱՂԱՋՈՒԹԵԱՆ, ՄԻ ՄԱՐՄԻՆ ԵՒ ՄԻ ՀՈԳԻ, ՈՐՊԻՍ ԵՒ ԿՈԶԵՅԱՐՈՒՔ Ի ՄԻ ՅՈՅՆ ԿՈԶՄԱՆ ՁԵՐՈՅ» (Եփես., Դ 2—4):

Արդ, «ԶԱՄԵՆԵՍԵԱՆ ՊԱՏՈՒԵՑ ԷՔ, ԶԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՍԻՐԵՑ ԷՔ, ՅԱՍՈՒԵՑ ԵՐՈՅ ԵՐԿԵՐՈՒՔ, ԶԹԱԿԱԽՈՐԾ ՊԱՏՈՒԵՑ ԷՔ» (Ա. Պետր., Բ 17):

Մեր Տիրոջ և Փրկչի իշման Ս. Սեղանեն սիրո և օրհնուրյան հայրապետական ողջոյն Ձերդ Ամենապատվորյան, Մրցոց Հակոբյանց հավատավոր միաբանուրյան և համայն հավատացյալ ժողովրդին:

«ՇՆՈՐՀՔ ԸՆԴ ՁԵԶ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ, ԱՄԷՆ»:

**ՇԱՅԲՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԵՍԻՆ ՀԱՅՈՑ**

Տուալ կոնդակս ի 25-ն ապրիլի
1957 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌԵԶ,
ի Ս. Եղմիածին: